ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ պահանջներին համապատասխան

Վերապատրաստվող՝ Գայանե Ալեքսանյան

Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի <Մանկապարտեզ> ՀՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1

Ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման գործընթացը և դրա անհրաժեշտությունը. 5

Զարգացնող ուսուցողական միջավայր..... 5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2

Հիմնական խաղային գոտիներ կամ աշխատանքային կենտրոններ

Առարկայական զարգացնող միջավայրին ներկայացվող մանկավարժահոգեբանական պահանջները. 14

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆԱՈՐՈՒՄ.....24

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 25

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական ուսումնական հաստատության կոլեկտիվի աշխատանքն իրականացվում է հաստատության աշխատանքային պլանին համապատասխան: Պլանն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ այն հանվում է մանկավարժական գիտության նվաճումների, առաջավոր փորձի ուսումնասիրության,տվյալ փուլում ծառացած և հեռանկարային խնդիրների հաշվառման վրա:

Ըստ ղեկավարման և կառավարման ընդհանուր սկզբունքների՝

1. Պլանը պետք է լինի կոնկրետ իրագործելի:
2. Պլանի յուրաքանչյուր բաժին պետք է պարունակի այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են նախադպրոցական հաստատությանաշխատանքի բարելավմանը՝ հաշվի առնելով այդ հաստատության առանձնահատկությունները:
3. Պլանը պետք է լինի օպտիմալ: Դա նշանակում է, որ պլանավորման ժամանակ պետք է կիրառվեն տարբեր ձևեր, մեթոդներ և մոդելներ՝ հեռանկարային զարգացման համար:

Անհրաժեշտ է ուսումնադաստիարակչական պլանը կազմել նախադպրոցական կրթության չափորոշչին համապատասխան: Նախադպրոցական կրթության չափորոշիչը կազմում է վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամաս և սահմանում նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները:

Նախադպրոցական կրթական չափորոշիչների բովանդակությանը պայմանականորեն տարանջատված է ոլորտ-տիրույթների և բաղադրիչների:

Չափորոշիչը նպատակաուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման, համակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովմանը, առողջ կենսակերպի հիմքերի ձևավորմանն ու սոցիալականացմանը:

Չափորոշիչը մշակվում է «Կրթության մասին» ՀՀ օրենսդրության, հանրակրթության պետական կրթակարգի, վաղ մանկության զարգացման հայեցակարգի և ռազմավարության պահանջներին համապատասխան:

Չափորոշիչը նաև կրթական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդհանուր մակարդակն է, երեխայակենտրոն կրթության հիմքը, որը հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու երեխաների անձը, հենվելու երեխաների ուժեղ կողմերի վրա և խթանելու համատեղ ուսումնառություն:

Չափորոշիչը որոշակի է, հասանելի, իրատեսական, համապարփակ և ժամկետային:

Չափորոշիչի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմք:

Չափորոշիչները դասակարգված են ըստ հետևյալ հինգ ոլորտների

1. Շարժողական
2. Խոսք և լեզու
3. Իմացական
4. Հուզական, անձնային և սոցիալական զարգացում
5. Ինքնասպասարկում և անվտանգություն

Նախադպրոցական կրթական ծրագիրը սահմանում է յուրաքանչյուր տարիքային խմբի կրթության բովանդակության ընդհանրական կառուցվածքը, կանոնակարգային պահերը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղություններին հատկացվող շաբաթական և տարեկան պարապմունքների քանակը, սաների շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, ակնկալվող արդյունքներն ըստ զարգացման ոլորտների, գործունեության ձևերի:

Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է զարգացման հետևյալ հիմնական բնագավառներով (ուղղություններով)՝

1) խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

2) հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.

3) շարժողական և ֆիզիկական զարգացում.

4) աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

5) բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական և սեռային գիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ:

ԳԼՈՒԽ 1

Ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման գործընթացը և դրա անհրաժեշտությունը

Դաստիարակի պլանավորման մեջ պետք է տեղ գտնեն ոչ միայն պարապմունքները, այլև երեխաների գործունեության բոլոր տեսակները՝ մարմնամարզություն, դիտումներ, խաղ աշխատանք, խաղ- զվարճալիք…

Դաստիարակը պլանավորման մեջ առանձին բաժիններով ընդգրկում է առօրյայում երեխաների կողմից իրականացվող աշխատանքի տարբեր ձևեր՝ ամբողջ շաբաթվա համար:

Զարգացնող ուսուցողական միջավայր

Հանրակրթության պետական կրթակարգի (ՀՀ կառավարության 2004թ մայիսի 27-ի N20 արձանագրային որոշում) նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքներում ամրագրված է երեխայակենտրոն ուսումնադաստիարակչական և ֆիզիկական միջավայրի ստեղծման, ինչպես նաև կրթության կազմակերպման գործընթացի ու արդյունքների դիտարկման, վերահսկման անհրաժեշտությունը:

Ստորև ներկայացվում է կրթական հաստատություններում 5-6 տարեկան երեխաների համար զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջները:

Ուսումնական հաստատության

Ֆիզիկական միջավայրին ներկայացվող չափանիշները

Նպատակը.

Ներքին և արտաքին ֆիզիկական միջավայրը նպաստում է երեխայի բնական աճին և զարգացմանը՝ հետազոտության և ուսումնառության համար հնարավորությունների ապահովման միջոցով:

Հիմնավորում.

Թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների վարքի և զարգացման վրա ազդում է այն ֆիզիկական միջավայրը, որտեղ նրանք ապրում և աշխատում են: Ֆիզիկական տարածքի և այնտեղ գտնվող նյութերի որակը իր ներգործությունն է ունենում երեխաների ներգրավման մակարդակի և մեծահասակների հետ նրանց շփման որակի վրա: Թե՛ ներքին, թե՛ արտաքին տարածքի մեծությունը, ձևավորումը, օգտագործումը պետք է շարունակաբար գնահատվեն:

1.Ներքին և արտաքին ֆիզիկական միջավայրը պետք է լինի ապահով, մաքուր, գրավիչ և ընդարձակ, տարածք բացօթյա խաղահրապարակում: Աշխատակազմը պետք է բավարար ժամանակ ունենա մինչև երեխաների գալը նախապես պատրաստելու միջավայրը:

Դիտարկելով երեխաների հաղորդակցությունը միմյանց հետ, նրանց ներգրավվածությունը աշխատանքներում, հստակ կարելի է որոշել, թե արդյոք տարածությունը բավարար է:

Միջավայրը պետք է լինի գրավիչ: Միջավայրում պետք է ցուցադրվեն երեխաների աշխատանքները, այլ նկարներ, որոնք փակված են երեխայի աչքի մակարդակին համապատասխան բարձրության վրա:

2. Աշխատանքային կենտրոնները հստակորեն սահմանված և տարաբաժանված են տարածական առումով: Տարածքը դասավորված է այնպես, որ երեխաները կարողանան աշխատել անհատապես, միասին, փոքր կամ մեծ խմբերով: Տարածքի դասավորությունը թույլ է տալիս, որ երեխաները ազատ տեղաշարժվեն մի կենտրոնից մյուսը՝ առանց մյուսների ուշադրությունը շեղելու:

Տարածքի դասավորությունը նույնքան կարևոր է, որքան նրա ընդարձակությունը: Երեխաները պետք է կարողանան մի աշխատանքից անցնել մյուսին առանց մյուսներին խանգարելու: Աշխատանքային կենտրոնները պետք է բաժանված լինեն այնպես, որ մի կենտրոնում աշխատող երեխաների ուշադրությունը չշեղվի մյուս կենտրոններում աշխատող երեխաների պատճառով: Լավ կազմակերպված տարածքը նպաստում է ցանկալի վարքագծի ձևավորմանը, մարդկանց միջև դրական հաղորդակցությանը, ինչպես նաև նյութերի ակտիվ կիրառմանը:

3. Տարածքի դասավորությունը պետք է թույլ տա, որ երեխաները կարողանան զբաղվել իրենց տարիքին համապատասխան բազմազան և տարբեր տևողություն պահանջող աշխատանքներով:

Այս չափանիշը ավելի շատ վերաբերում է աշխատանքներին, քան կենտրոններին: Օրինակ, բնագիտությունը և մաթեմատիկան պահանջում են աշխատանքներ, որոնք չեն սահմանափակվում խմբասենյակի մեկ կենտրոնով: Ուստի սենյակը պետք է դասավորված լինի այնպես, որ այդ աշխատանքները իսկապես կատարվեն: Կամ, խաղադեկորները, դերախաղը, գրքի ընթերցանությունը պահանջում են առանձին տարածք: Արվեստի կամ խոհարարական կենտրոնը, որտեղ աշխատանքները մի փոքր ավելի թափթփվածություն են առաջացնում, լավ կլինի տեղադրել ջրին մոտ: 5-6 տարեկան երեխաներին անհրաժեշտ է հատկացնել նաև առանձին հանգիստ անկյուն: Միջավայրը պետք է ունենա փափուկ պարագաներ, ինչպիսիք են գորգը, բարձերը և այլն:

4. Բավարար քանակով, բազմատեսակ և դիմացկուն նյութերը և սարքավորումը պետք է լինի երեխաների տարիքին համապատասխան և դրված լինի երեխաների համար մատչելի տեղում: Այսինքն, ցածր և բաց դարակների վրա, որտեղից երեխան կարող է ազատ և ինքնուրույն օգտվել: Նյութերը փոփոխվում են և հարմարեցվում երեխաների հետաքրքրություններին:

Նյութերը և սարքավորումը գնահատվում են տարբեր տեսանկյուններից: Անհրաժեշտ է ունենալ ինչպես բազմազան, այնպես էլ համապատասխան տեսակի նյութեր և սարքավորումներ: Երեխաներին անհրաժեշտ է ունենալ ակտիվ խաղ ապահովող սարքավորում և նյութեր, որոնք խթանում են երեխայի զարգացման բոլոր ոլորտները: Օրինակ՝ կառուցողական նյութեր, մանիպուլյատիվներ, դերախաղի պարագաներ, նկարչական նյութեր, գրքեր, ձայներիզներ և այլն: Երեխաները ավելի ստեղծագործաբար և իմաստալից են օգտագործում նյութերը, եթե դրանք հասանելի են իրենց (ինքնուրույն կարող են վերցնել) և ժամանակ առ ժամանակ փոփոխվում են բազմազանություն ստեղծելու նպատակով:

5. Երեխաների համար ապահովված է առանձին տեղ՝ կախելու իրենց հագուստը և պահելու իրենց անձնական իրերը:

Անձնական իրերի համար տեղ կարելի է ապահովել տարբեր ձևերով: Սակայն և՛ մեծերը, և՛ երեխաները դա պետք է անպայման ունենան, որպեսզի կարողանան իրենց անձնական իրերը պահել և հետո հեշտությամբ գտնել:

6. Արտաքին միջավայրը ներառում է տարբեր տիպի մակերեսներ, ինչպիսիք են՝ հողը, ավազը, խոտը, հարթ ու խորդուբորդ հատվածները, կոշտ տարածքը և այլն: Արտաքին միջավայրը կարող է լինել ստվերոտ, բացօթյա, փորելու, ինչ-որ բան քշելու, մագլցելու, հավասարակշռելու, առանձին խաղալու: Արտաքին միջավայրը պաշտպանվում է ցանկապատով կամ որևէ բնական արգելամիջոցով, որով այն առանձնացվում է փողոցից կամ այլ վտանգներից:

Արտաքին տարածքը մեծապես կախված է աշխարհագրական վայրից: Այս չափանիշը ընդգծում է տարատեսակ մակերեսների և սարքավորումների անհրաժեշտությունը: Եթե ստվերոտ ու թեք մակերեսներ չկան, կարելի է միջավայրում ունենալ այնպիսի պարագաներ, ինչպիսիք են ծածկերը, թեքահարթակները և այլն: Արտաքին տարածքը պետք է փողոցից կամ այլ վտանգավոր բաներից պաշտպանված լինի ցանկապատով կամ բնական արգելամիջոցներով:

Ուսումնական հաստատության ֆիզիկական

միջավայրի կազմակերպումը

Ուսումնական ծրագրի արդյունավետության գրավականներից մեկը երեխայակենտրոն ուսումնական միջավայրի ձևավորումն է: Ուսումնական միջավայրը երեխաներին տալիս է ժամանակ և հնարավորություններ իրենց շրջապատող աշխարհը ճանաչելու և ստեղծագործաբար արձագանքելու աշխարհում կատարվող երևույթներին: Ուսումնական միջավայրը իր բնույթով սոցիալական է և ապահովում է խթանող ու ապահով մթնոլորտ բոլոր երեխաների համար: Այն երեխաներին տալիս է ժամանակ և հնարավորություններ գործելու համարձակորեն, ուսումնասիրելու և հետազոտելու իրենց աշխարհը: Երեխաները ձեռք են բերում փորձ, որը խրախուսում է շփվելու մյուսների հետ, զարգացնելու միջանձնային հմտություններ, աշխատելու և սովորելու համագործակցաբար:

Նախադպրոցական ուսուցման և փորձառության վրա ներգործում են հատակն ու պատերը, խմբասենյակի ձևն ու չափը, խաղահրապարակը, կահույքը, օգտագործվող նյութերն ու պարագաները, սարքավորումներն ու խաղալիքները: Գեղագիտական ճաշակով և հարմարավետությամբ աչքի ընկնող խմբասենյակները լավ են անդրադառնում թե՛ երեխաների, թե՛ դաստիարակների վրա: Կահույքի դասավորությունը պատկերացում է տալիս, թե ինչ նպատակով է օգտագործվում տվյալ տարածքը: Այն նաև կարևոր է անցուդարձի, անվտանգության ապահովման, աղմուկի և դաստիարակի դիտարկման տեսանկյունից: Դպրոցի ներքին և արտաքին տարածքի նախագիծը պետք է լինի նպատակային և լավ մտածված: Լավ նախագծված միջավայրը նպաստավոր է երեխաների խմբային խաղերի, շփման, անկախ տեղաշարժման և խնդիրների լուծման համար: Երեխաները համակվում են ոգևորությամբ, և նրանց գրավում է սովորելու, նյութերը մանրազննին ուսումնասիրելու, նոր նյութեր հայտնաբերելու միտքը:

Երեխայի զարգացման համար անկաշկանդ միջավայր է պետք, որտեղ նա կկարողանա բազմակողմանիորեն արձագանքել շրջապատին: Այն պիտի բնության և սոցիալական

միջավայրի համակցված մոդել լինի, որ երեխային մղի սեփական գործողությունները համաձայնեցնելու այդ միջավայրի օրենքներին:

Զարգացման բնականոն գործընթացում ուսուցումը հանդիսանում է միջոց, որն ամրապնդում է զարգացման գործընթացը և առաջ քաշում մշակութային գործոններ: Միջավայրը մեծապես նպաստում է ուսուցման գործընթացին:

Որպեսզի միջավայրը զարգացնող լինի, այն պիտի նախապատրաստել այնպես, որ

- հնարավորություն տա երեխայի անհատական զարգացմանը
- մղի երեխային ինքնաբուխ, ստեղծագործական գործունեության
- համապատասխան լինի երեխայի կարիքներին և զարգացման մակարդակին

Ուսումնական հաստատության նյութական միջավայրը իր մեջ ներառում է հարմար կահավորված սանհանգույց, խաղասենյակ, ննջասենյակ խոհանոց, հանդերձարան, այգում կամ բակում բացօթյա խմբասենյակ՝ ամառային պարտեզ:

Ուսումնախաղային նյութեր

Խմբասենյակը հագեցած պիտի լինի բազմատեսակ խաղալիքներով, որ երեխան կարողանա խաղեր կազմակերպել, ազատ խաղալ ընկերների հետ, ինքնաբուխ գործունեության հնարավորություն ունենա: Խաղալիքները բազմազան պիտի լինեն՝ տունտունիկ խաղալու ամանների և խոհանոցային այլ իրերի հավաքածուներ, խաղալիք-կահույք, տիկնիկներ, լեգոներ, խաղալիք-մեքենաներ, սեղանի խաղեր, տրամաբանական խաղեր, տարբեր չափերի և գույնի գնդակներ, տարբեր գործիքներ... Խաղալիք կարող են դառնալ նաև աթոռները, սեղանները, պահարանները, արկղերը: Օրինակ, աթոռները կարող են գնացքի վագոններ կամ ավտոբուսներ դառնալ, պահարանը՝ բույն, տուն:

Խմբասենյակում հարմար սեղաններ և աթոռներ պիտի լինեն, սեղաններին՝գիրք-տետրեր, գրչամաններ, դրանց մեջ՝ մատիտներ, ֆլոմաստերներ, գրիչներ, որ ուզած պահին երեխան կարողանա աշխատել, նկարել, ինչ-որ բան պատրաստել կամ պարզապես խզբզել: Բոլոր գրենական պիտույքները (գուաշ, գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, պլաստիլին, մատիտներ, սրիչ, քանոն, տարբեր երկարության, լայնության փայտիկներ, երկրաչափական մարմիններ) նույնպես մատչելի տեղում և հասանելի պիտի լինեն: Աշխատանքային կենտրոններում կան բազմաթիվ նյութեր, որոնք երեխաներն օգտագործում են ստեղծագործաբար: Դաստիարակները պետք է մեծ ուշադրությամբ ընտրեն, որպեսզի դրանք գրավեն երեխաներին և օգնեն նրանց բավարարելու իրենց հետաքրքրությունները: Յուրաքանչյուր կենտրոն պետք է հագեցած լինի իր նշանակությանը համապատասխան ուսումնախաղային պարագաներով:

Գրաճանաչության կենտրոն

Գրաճանաչության կենտրոնում պահվում են գրքեր և նյութեր՝ ունկնդրելու և գրելու պարապմունքների համար: Սա պետք է լինի խաղաղ, անաղմուկ տարածք, ուր երեխաները կարող են գրքեր նայել, մեկը մյուսի համար «կարդալ», կամ նրանց համար կարող է կարդալ դաստիարակը կամ էլ որևէ կամավոր ծնող: Գրականությունն օգտագործվում է օրվա ընթացքում տարբեր ուսումնական նպատակներով: Երեխաներին առաջարկվում է

ինքնուրույնաբար գրքեր ստեղծել, հորինել, դերակատարել, լսել զանազան պատմություններ, քննարկել գրքերի հերոսներին և այլն:

Մաթեմատիկայի կենտրոն

Մաթեմատիկային հատկացված տարածքում պահվում են առարկաներ, որոնք երեխաները կարող են մասերի բաժանել կամ հավաքել, օրինակ՝ գլուխկոտրուկներ և փոքր խաղադեկորներ: Այստեղ կարող են լինել խաղեր, որոնք երեխաներին օգնում են հարմարեցնել, հաշվել և դասակարգել մանր առարկաներ, ինքնուրույն հնարել խաղեր և զարգացնել լեզվական հմտությունները: Այս կենտրոններում անցկացվող պարապմունքները երեխաներին օգնում են զարգացնել իրենց մտավոր հմտությունները, փոքր մկանները և աչք-աչք կոորդինացիան: Կենտրոնի աշխատանքները նպաստում են նաև սոցիալական հմտությունների զարգացմանը համատեղ աշխատանքով, բանակցելու և պրոբլեմներ լուծելու միջոցով: Մաթեմատիկայի կենտրոնը կարելի է համալրել տարբեր ինքնաշեն և բնական նյութերով, օրինակ՝ լոբիներ, գունավոր և տարբեր չափսի կոճակներ, մետաղադրամներ, թվային և տարբեր թեմատիկ քարտեր և այլն:

Արվեստի կենտրոն

Արվեստի աշխատանքային կենտրոնը երեխաներին խրախուսում է հետազոտելու և զարգացնելու իրենց ստեղծագործական ունակությունները, զվարճանալու նոր նյութերով, դրսևորելու իրենց զգացմունքները: Այս տարածքում օգտագործվող նյութերից կարող են լինել ներկերը, թուղթը, մկրատը, գունավոր մատիտները, կավիճը, գործվածքը կամ նյութերի կտորտանքը՝ սոսնձելու և փակցնելու համար: Այստեղ կարող են ավելացվել նաև բնական նյութեր, օրինակ՝ փայտ, տերևներ, ավազ, եղևնու կոներ և այլն: Այս կենտրոնում խրախուսվում է ստեղծագործական ինքնուրույնությունը, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցությունը, սեփական արժանապատվության գիտակցումը, մանր և մեծ շարժողական հմտությունների զարգացումը, մտավոր ունակությունների խթանումը: Արվեստի կենտրոնը նպաստում է երեխաների գեղագիտական դաստիարակությանը և օգնում է երեխաների մոտ սեր արթնացնելու արվեստի նկատմամբ:

Դերային խաղի կենտրոն

Խմբասենյակը տիկնիկներ պատրաստելու փոքրիկ արհեստանոց (մկրատներ, ասեղներ, թելեր, ժապավեններ, կտորներ, կոճակներ, ուլունքներ, թղթեր...) և տիկնիկային թատրոն պիտի ունենա: Այստեղ կծնվեն այն տիկնիկները, որոնցով նա թատրոն, տուտտունիկ և այլ խաղեր կխաղա: Արհեստանոցում դրված կլինի տիկնիկային թատրոնի արկղը կամ տիկնիկների կախիչը, փոքր, հարմար միջնորմ (շիրմա), տիկնիկներ, որոնցից ամեն անգամ տարբեր կերպարներ կարելի է ստանալ: Միջնորմը, որը հեշտությամբ կբացվի, կփակվի, ոչ միայն տիկնիկային ներկայացումների, այլև տարբեր նպատակներով կօգտագործվի: Երեխաներն իրենք կորոշեն ինչ խաղալ և որպես ինչ օգտագործել միջնորմը:

Երեխան կարող է տիկնիկային թատրոն խաղալ նաև սեղանի վրա. առանց շիրմայի, կերպարներ կարող են դառնալ օգտագործված, «մաշված» գրիչները, մատիտները, ռետինները: Երեխայի նկարազարդված ձեռքերը, մատներն անգամ կարող են տիկնիկ-կերպարներ դառնալ:

Մանր ավազով լցված ցածր կողերով (6-7 սմ բարձրությամբ) արկղը (100×100սմ) ևս տիկնիկային խաղի, տիկնիկային ներկայացման հարմար «բեմ» է: «Թատրոնում» այն իր հիմնական տեղը պիտի ունենա: Ավազի մեջ կամրացնեն ներկայացման համար իրենց պատրաստած դեկորները, ավազի մեջ ճանապարհ կբացեն, սարեր, ձորեր կսարքեն: Դա կզարգացնի նաև երեխաների տարածական մտածողությունը, կողմնորոշվելու ունակությունները:

Պատին փակված հայելիները թատրոն-խաղի հետաքրքիր ձևի հնարավորություն են տալիս: Երեխան իրեն դիտարկելու, իր հետ զրուցելու, իր հետ խաղալու, իր շարժումներին, դիմախաղին հետևելու հնարավորություն է ունենում: Նա կարող է ներկայացում խաղալ, հայելու դեմ հեքիաթ պատմել (հեքիաթասաց դառնալ), տարբեր խաղեր կազմակերպել: Նույն բանը կարող է ընկերոջ հետ անել՝ խաղալ, կատակել, ծամածռություններ անել. հայելու առաջ նրանք ավելի ազատ ու անկաշկանդ են լինում:

Երեխայի համար թատրոնը սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, ինքնակազմակերպման, ստեղծագործելու, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները:

Սպորտի կենտրոն

Խաղասենյակի մի անկյունը սպորտային պիտի լինի, կամ երեխաները փոքր սպորտային սենյակ պիտի ունենան: Պատին՝ շվեդական կարճ պատեր, բասկետբոլի փոքրիկ ցանցեր, հատակին՝ մարզական ներքնակներ /մաթեր/, պտտօղակներ, հեծանիվներ, ցանցարկղի մեջ՝ տարբեր չափսերի գնդակներ, պարաններ, սպորտային այլ խաղեր, որոնցով կարելի է խմբասենյակում խաղալ: Սպորտային կենտրոնը կնպաստի երեխաների ֆիզիկական զարգացմանը, շարժումների կոորդինացիային, ակտիվության զարգացմանը:

Խոհարարության կենտրոն

Երեխայի զարգացումը ներառում է նրա կյանքի բոլոր ոլորտները: Հաճախ նա իր գործունեությունը /խաղ, աշխատանք և այլն/ կազմակերպում է մեծերին նմանակելով, նրանց փորձը կրկնելով, փորձելով նմանվել նրանց: Նա դա շատ լավ է անում խոհարարության կենտրոնում: Գերադասելի է, որ այն խմբասենյակին կից լինի: Խոհարարությունը հնարավորություն է տալիս երեխաներին ժամանակ հատկացնել բնագիտություն սովորելու համար, համտեսել նոր կերակրատեսակներ, հասկանալ չափելու հետ կապված մաթեմատիկական հասկացություններ: Միասին պատրաստելը երեխաներին հնարավորություն է տալիս շփվել միմյանց հետ, սովորեցնում է կիսել ունեցածը, աշխատել զույգերով: Երեխաները վայելում են իրենց պատրաստածը միասին համտեսելու հաճույքը:

Խոհարարության միջոցով հիմնարար շատ հասկացություններ են ուսուցանվում: Մանկավարժները քննարկման են դնում գույների, թվերի, ձևերի, սննդի և բնագիտության հետ կապված հարցեր: Խոհարարությունը երեխաներին իրական կյանքի փորձառություն է տալիս:

Բնագիտական կենտրոն

Այս կենտրոնը կբավարարի երեխայի բնագիտությանը վերաբերող հետաքրքրությունները: Խոսքը միայն բնությանը չի վերաբերում: Բացի բույսերի և կենդանիների «անկյունից», մի հարմար տարածք «լցված» կլինի տարբեր առարկաներով, որոնք կգրավեն երեխային, կշարժեն նրա հետաքրքրությունը՝ մագնիս, կողմնացույց, ավազի ժամացույց, հեռադիտակ, տարբեր պտուտակներ, լարեր,մետաղի մանրոն /մետաղափոշի/, տարբեր գործիքներ...

Մեծերի հետ /դաստիարակ, ծնող/ նորոգելով աթոռ, սեղան՝ երեխան աստիճանաբար կսովորի գործածել սղոցն ու մուրճը, դուրն ու աքցանը:

Այս կենտրոնը հաճախակի կարող է փոփոխվել՝ ըստ հետաքրքրությունների, սեզոնային փոփոխությունների և թեմատիկ պարապմունքների: Ֆիզիկայի այնպիսի երևույթներ, ինչպիսիք են մագնիսականությունը, ջրի հատկությունները և ձգողականությունը, կարող են ներկայացվել նյութերի միջոցով:

Այս կենտորնում փոքր չափի տարբեր սարքեր են պետք՝ քանդվող-հավաքվող, զանազան առարկաների մասեր, որոնք հավաքելով երեխան ինչ-որ բան կարող է ստանալ: Կարևոր չէ, թե ինչ կստանա. կարևորը ընթացքն է. նա մտածում է, ստեղծագործում, ստեղծում, փորձեր է կատարում, իրերի, առարկաների հետ աշխատելու փորձ է ձեռք բերում, վարժվում է անվտանգ աշխատելուն:

Երեխայի գործունեությունը պետք է լինի ոչ թե պարապմունքի իրականացում, այլ ամենօրյա խաղ-աշխատանք, սովորություն, ծես: Ամեն օր ծաղիկները, ծառերը ջրելը, հողը փխրեցնելը, կենդանիներին կերակրելը, նրանց բույնը մաքրելը սովորություն պիտի դառնա, և երեխան ինքը կընտրի այդ օրվա իր անելիքը:

Եթե գործիքները ձեռքի տակ են, օրվա մի պահի նա կուզենա մի ծառից մյուսը փոքրիկ առու բացել, որ ջուրը անարգել անցնի, կամ ծառի տակի հողը կփխրեցնի, բակում թափված տերևները կհավաքի... Երեխայի կյանքն ինքը բնագիտական գործունեություն է: Պետք է միայն համապատասխան պայմաններ ստեղծել նրա համար:

Նախակրթարանը պիտի գտնվի այգում կամ գոնե կից փոքրիկ այգի ունենա, որտեղ երեխաները կկարողանան ծաղիկներ աճեցնել, ծառեր խնամել, տարբեր սերմեր ցանել, կենդանիներ պահել: Խմբասենյակի մի անկյունում ևս երեխաները կարող են բույսեր աճեցնել, բնագիտական փորձեր կատարել, կենդանիներ պահել: Խումբը կարող է ունենալ իր ակվարիումը, հիգիենիկ և առողջապահական կանոնները պահպանելը պարտադիր է: Բակում երեխաները մեծերի հետ միասին ծառեր, այլ բույսեր կտնկեն, կմշակեն, շրջապատը կմաքրեն:

Խումբը պիտի ունենա գյուղատնտեսական փոքրիկ գործիքներ՝ բահեր, փոցխեր, դույլեր, ցնցուղներ, աղբաման, որոնք տեսանելի և հասանելի տեղում պիտի դրված կամ կախված լինեն: Երեխան ինքը կորոշի՝ երբ աշխատել այգում, ինչ գործ անել: Ծառ ու ծաղիկ տնկող, կենդանիներ խնամող երեխան շրջակա միջավայրը պահպանելու, այդ միջավայրում ապրելու կուլտուրա ձեռք կբերի: Բնական ճանապարհով, գործունեության ընթացքում, բնությամբ զբաղվելու արդյունքում կձևավորվեն աշխատանքային հմտություններ:

Բակ-պարտեզը լավագույն խաղահրապարակն ու խմբասենյակն է ցանկացած ժամանակ:

Տարվա բոլոր եղանակներին էլ բակն առողջարար է, ֆունկցիոնալ, հետաքրքիր, զարգացնող:

Ամառային բակ-պարտեզ

Խմբասենյակի ողջ նկարագրությունը հավասարապես վերաբերում է նաև բակին: Երեխաները ողջ օրը կանցկացնեն ամառային պարտեզում՝պաշտպանվելով խմբասենյակի խեղդող, ճնշող տոթից, այն, ինչ երեխան խմբասենյակում կաներ, ավելի մեծ սիրով և օգուտով բակում կանեն: Այստեղ ասֆալտի գոյությունը պիտի բացառվի, միայն մանր ավազ, խոտով ու ծաղիկներով ծածկված հող, դրանք ոչ միայն անվտանգ են, այլև լավ «շինանյութ» են խաղ-գործունեության համար: Բակում լողավազան պիտի լինի /սկզբի համար՝ գոնե փչվող/, հովանոցներ, պառկելու, արևային լոգանք ընդունելու հարմարություն, ճոճանակներ, գամակներ, պլաստմասսե տարբեր հարթություններ, սեղան-աթոռներ, փչովի օղակներ, խաղալիքներ, նստարաններ, պտտօղակներ, պարաններ, գնդակներ: Բակը պիտի ամառային լողափ լինի՝հով, ծառածածկ, ազատ, անվտանգ:

Բակում՝ երևացող տեղում, մաքրելու միջոցներ, դույլեր, աղբաման, փոքր գյուղատնտեսական գործիքներ պիտի լինեն:

Երեխան չի հոգնում գործունեությունից /խաղից, աշխատանքից, պարապմունքից/ որը համապատասխանում է նրա ֆունկցիոնալ կենսական պահանջմունքներին:

Այս աշխատանքում ներկայացված է ապլիկացիա, թեման՝ Բանջարեղեններ, որի նպատակն է երեխաների մոտ զարգացնել շարժողականության մոտորիկան և դրան զուգահեռ ծանոթացնել բանջարեղեններից ձմերուկի հետ:

Այս աշխատանքում ներկայացված է կառուցողական պարապմունք, որի նպատակն է երեխաներին սովորեցնել վերլուծել կառույցը՝ առանձնացնելով հիմնական մասերը, տարբերել դրանց չափը և ձևը, ծանոթացնել շինարարական տարբեր նյութերի, խաղալիք աղյուսների հետ, ամրակայել պատկերացումները շինարարական կառույցների վերաբերյալ:

Հիմնական խաղային գոտիներ կամ աշխատանքային կենտրոններ

Առարկայական զարգացնող միջավայրին ներկայացվող մանկավարժահոգեբանական պահանջները

Մտավոր դաստիարակության հիմքում ընկած զգայական դաստիարակությունն ապահովում է երեխայի զգայարանների զարգացումը՝ որպես շրջապատող միջավայրի գույները, ձայները, ձևերը, հոտերը, համերը ընկալելու, յուրացնելու միջոց: Նախադպրոցականների զգայական դաստիարակության խնդիրները (ճանաչել, տարբերակել և անվանել գունային երանգները, հոտերը և համերը, նյութի որակը, ջերմաստիճանը, տարածության և ժամանակի մեջ կողմնորոշումը, հույզերը) իրականացվում են ծրագրում նախատեսված պարապմունքներում, գործունեության ձևերում և առօրյա կյանքում՝ նպաստավոր շրջակա միջավայրի միջոցով: Հատուկ ստեղծված զարգացնող առարկայական միջավայրի միջոցով ապահովվում է երեխաների դիտունակության զարգացումը, երեխաները սովորում են տեսնել, ընկալել, իմաստավորել շրջապատող առարկաները, նրանց առանձնահատկությունները, նշանակությունը, նմանությունները և տարբերությունները, համամասնությունը, նախշազարդումը, գիտակցում են շենքերի կառուցվածքի և նշանակության փոխկախվածությունը, ընդարձակում են պատկերացումները մասնագիտությունների, նրանց նշանակության, առանձնահատկությունների մասին:

Առարկայական-խաղային միջավայրը պետք է լինի տարատեսակ, բազմաֆունկցիոնալ և տարբերակային, խաղային տարածքը՝ համապատասխանի երեխաների սոցիալական զարգացման կարիքներին:

Հիմնական խաղային գոտիները կամ աշխատանքային կենտրոնները լինում են

- Ստեղծագործական, սյուժետա-դերային
- Բացօթյա կամ բակային
- Կառուցողական (խաղադեկորներ)
- Կերպարվեստ
- Գրագիտություն
- Մաթեմատիկա
- Բնագիտություն (ավազ և ջուր)
- Երաժշտություն

Ստեղծագործական, սյուժետային խաղեր

Նպատակն է՝

Երեխաների համար ստեղծել առանձնահատուկ հնարավորություն իրական կյանքում տեսածը և զգացածը արտացոլելու համար, դրանով իսկ նպաստելու ինքնաճանաչմանը, ինքնադրսևորմանը:

Անհրաժեշտ նյութեր՝

Գլխարկներ, դիմակներ, հագուստ,կոշիկներ, աքսեսուարներ, տիկնիկներ, տիկնիկի օժիտ (մահճակալ, հայելի, սպասք...)...

Նպաստում է՝

Ուշադրության կենտրոնացմանը, հետաքրքրությունների ընդլայնմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ակնհայտ իրադրությունների մեկնաբանմանը, ինքնավերահսկմանը, որոշումներ կայացնելու, խնդիրներ լուծելու, հաղորդակցական կարողությունների, զգայարանների զարգացմանը, պատասխանատվության բարձրացմանը:

Բացօթյա կամ բակային խաղեր

Նպատակը՝

Ծանոթացնել շրջակա միջավայրին և օգնել երեխաներին հասկանալու, թե ինչպես են իրենց զգում շրջապատում: Խմբասենյակում կազմակերպված պարապմունքից հետո աշխատանքային կենտրոնի ինքնատիպ տարածումն է բացօթյա միջավայրում: Խոսքի զարգացման, կերպարվեստի, երաժշտության, ֆիզիկական դաստիարակության, էկոկրթության և ծրագրի այլ բաժիններից շատ պարապմունքներ հարմար կլինի կազմակերպել դրսում:

Անհրաժեշտ նյութեր՝

Տաղավար, ճոճանակներ, ֆիզ. պարագաներ, խաղեր ավազով, ջրով, ստվերոտ տարածք, երթևեկության խաչմերուկ...

Նպաստում է՝

Ակտիվության, արագ կողմնորոշման, հաղորդակցական հմտությունների, ամենօրյա շարժողական ռեժիմի իրականացմանը, ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու դրսևորմանը:

Կառուցողական խաղեր (խաղադեկորներ)

Նպատակը՝

Նույնատիպ (իրական կառույցների նման) կամ երևակայական կառույցների (շենքեր, կոթողներ, կամուրջներ, դարպասներ, կամարներ, հեքիաթային տնակներ, աշտարակներ, կենդանաբանական այգիներ...) ստեղծում:

Անհրաժեշտ նյութեր՝

Խորանարդներ, աղյուսներ, կամարներ, բուրգեր և այլ շինարարական նյութեր, բեռնատար, ինքնաթափ մեքենաներ, ինքնաթիռ, տարբեր չափերի և ձևերի մարդիկ, կենդանիներ, տիկնիկներ, ծառեր...

Նպաստում է՝

Տրամաբանական, մաթեմատիկական մտածողության զարգացմանը,սոցիալական խնդիրների լուծմանը, ստեղծագործական ներուժի բացահայտմանը, ուշադրության կենտրոնացմանը, ձեռք-աչք գործունեության կոորդինացմանը:

Արվեստ (կերպարվեստ, երաժշտություն)

Նպատակը՝

Նկարելու, ծեփակերտման, օրիգամիի, սոսնձման եղանակով արգասաբեր գործունեության կազմակերպում, նորանոր ինքնաշեն նյութերով խաղերի հարստացում, տարբեր նշանակության նյութերի համադրում, կոմպոզիցիայի ստեղծում, սեփական աշխատանքներով գրքերի կազմում:

Զգայական փորձով նորությունների հայտնաբերում, համակցված պարապմունքների կազմակերպման ժամանակ արվեստների կարևորում թե՛ գեղագիտական ճաշակի ձևավորման, թե՛ բուժական թերապիայի ուղղությամբ:

Անհրաժեշտ նյութեր՝

Ներկեր, թղթեր, գունավոր թղթեր, նկարակալ, վրձին, մկրատ, մատիտ, կավիճ, կտորեղեն, գործվածքեղեն, մետաղալարեր, բնական նյութեր (տերևներ, կոներ, ծաղիկներ, ավազ, ապարներ, սոսինձ, ծեփոն (պլաստիլին), նկարիչների աշխատանքներ, նկարներ պատերի ձևավորման համար, երգահանների նկարներ, ստեղծագործություններ, երաժշտական գործիք-խաղալիքներ, տոնական հագուստ, աքսեսուարներ)

Նպաստում է՝

Ստեղծագործական, իրենց սեփական փորձը հետազոտելու կարողությունների, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական հմտությունների զարգացմանը, ինքնագնահատմանը, փոքր մկանային խմբերի զարգացմանը, նորանոր աշխատանքների ստեղծման նպատակով ոգեշնչմանը և խանդավառմանը, ճկուն և ռիթմիկ պարային քայլքին:

Գրագիտություն

Նպատակը՝

Խմբասենյակում հանգիստ միջավայրի ստեղծում, որտեղ երեխաները կարող են հանդիպել տառերի հետ, նստել և գրքեր ուսումնասիրել, ունկնդրել մեծերի կողմից ընթերցված պատմությունները, «կարդալ» և լսել ընկերների «կարդացածը», հորինել, անգամ բեմադրել փոքրիկ պատմություններ:

Անհրաժեշտ նյութեր՝

Թղթեր, գունավոր մատիտներ, մանկական պատկերազարդ գրքեր, անհատական քարտեր «Գրադարան» խաղի համար, առարկայական և սյուժետային նկարներ, տպագիր տառերի ուրվանկարներ, ծրարներ, թերթեր, ամսագրեր, բացիկներ, դրոշմանիշներ, երեխաների թելադրություններ (ավագ խմբում՝ նաև գրաֆիկական), քանոններ, ալբոմներ, աշխատանքային տետրեր...

Նպաստում է՝

Սովորել ցանկանալուն, ընթերցանության արժևորմանը և ընթերցելու ձգտման ձևավորմանը, ուշադրության կայունացմանը, փոքր շարժողական մկանների, ստեղծագործական

կարողությունների զարգացմանը, ավագ խմբում գրուսուցման նախապատրաստմանը, ինքնագնահատականին:

Մաթեմատիկա

Նպատակը՝

Սովորել սովորել, տրամաբանել: Ձեռք բերել կազմակերպական և համակարգման փորձ:

Անհրաժեշտ նյութեր՝

Կառուցողական նյութեր, խաղալիքներ, խաղեր, ուլունքներ, բնական նյութեր, ավագ խմբում աշխատանքային տետրեր, պաստառներ, երկրաչափական պատկերներ, հանելուկներ...

Նպաստում է՝

Առարկաների համեմատմանը, դասակարգմանը, նմանության և տարբերության բացահայտմանը, հերթագայմանը, հաշվառմանը և հաշվելուն, մտքեր փոխանակելու, բանակցելու, կշռադատելու, կռահելու և խնդիրներ լուծելու կարողությունների զարգացմանը, աչք-ձեռք աշխատանքի կոորդինացմանը:

Բնագիտություն

Նպատակը՝

Խմբասենյակի հարմար հատվածում համապատասխան միջավայրի ստեղծում, որտեղ երեխաները կարողանան կատարել հետազոտություններ, եզրահանգումներ անել՝հարստացնելով սեփական կենսափորձը կենդանի և անկենդան բնության, բնական երևույթների մասին պատկերացումներով:

Անհրաժեշտ նյութեր՝

Տարիքային խմբերի համար նախատեսված սենյակային բույսեր, խնամքի պարագաներ, բնության օրացույց, նկարներ, մագնիս, ծաղիկներ և այլ նյութեր ծազկահարդարման համար:

Նպաստում է՝

Էկոկրթական գիտակցության ձևավորմանը, պատկերացումների ընդլայնմանը, զգայական զարգացմանը, սիրո և խնամքի դաստիարակմանը:

Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման

մանկավարժական գնահատականը

Նախադպրոցական կրթական համակարգում այսօր մեծ նշանակություն է ստանում անձի զարգացման և ձևավորման արժեքորումը: Երեխայի անձի ձևավորումը (նախաձեռնողականություն, ինքնուրույնություն, պատասխանատվություն, միջանձնային, սոցիալ-հուզական, ճանաչողական զարգացում և այլն) պահանջում է կրթության համակարգի նախագծում, հիմքերի ձևավորում նախադպրոցական տարիքում:

Ի՞նչն է գնահատելի նախադպրոցական ոլորտում: Գնահատելի է երեխայի զարգացման առկա վիճակը և ընթացքը, ինչպես նաև նախադպրոցական հաստատության աշխատանքի բոլոր ոլորտները: Դրանք են՝ ծրագրային բոլոր բաժինների ուղղությամբ խնդիրների ստեղծումը, դպրոցական ուսումնառության նախապատրաստումը և այլն:

Գանահատման շրջանակն է՝ ո՞վ, ու՞մ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, նպատակ, միջոց և պայման բաղադրիչները, գնահատման չափանիշները:

Մանկավարժական գնահատականի ընդհանուր սկզբունքներն են՝

- երեխայի հետ հաղորդակցման կարևորության գիտակցում դաստիարակի կողմից
- հստակության, լիարժեքության, արդարության, արդյունքի և որակի ապահովում
- մանկավարժական գնահատականի պաշարում մասնավոր գնահատականներից
- շփման ընթացքում հետադարձ կապի ապահովում

Դաստիարակի մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը բացահայտող միջոցներն են՝

- զրույցներ
- ռեժիմային բոլոր պահերի, երեխաների գործունեության տարբեր տեսակների դիտարկումներ, փաստերի հավաքագրում, վերլուծում
- մանկավարժական փաստաթղթերի և երեխաների կատարած աշխատանքների ուսումնասիրություն և վերլուծում
- տնօրենի, ավագ մանկավարժի գնահատող գրառումները
- դաստիարակի, երեխաների, գործընկերների, ծնողների, տնօրինության կարծիքը
- ցուցահանդեսների կազմակերպումը:

Յուրաքանչյուր երեխայի զարգացման համար վիճակը գնահատելու համար նրա փաստացի վիճակի իմացության կարիք է զգացվում:

Երեխայի զարգացման գնահատականը հիմնվում է անընդմեջ դիտարկումների (տեղեկատվության հավաքագրումը հիմնական մեթոդն է), որոշակի պայմանների ստեղծման և կանոնների պահպանման վրա: Կարևոր են նաև երեխայի կողմից հարցերին պատասխանելը, նրա աշխատանքների պահպանումը (դրանցով կարելի է դատել երեխայի հոգեվիճակի, հետաքրքրությունների, ինքնադրսևորման և այլնի մասին), զրույցները ծնողների և երեխաների հետ:

Տեղեկատվական աղբյուրներն են՝ երեխան, խումբը, մեծահասակները, երեխայի կյանքի պայմաններն ընտանիքում:

Ընդհանուր խմբի գնահատման ժամանակ կարելի է դիտարկել մի շարք երեխաների (անհնար է նույն ուշադրությամբ ողջ խմբին դիտել) վարքագիծը, գործողությունները, մտածելու կերպը,

համագործակցության առաջարկը, հաղորդակցման ոճը, զարգացման առաջընթացը՝ կատարելով անհրաժեշտ սեղմ գրառումներ, հավաքագրել փաստեր, կատարել ստացած տվյալների հաշվառում և արդյունքների մեկնաբանություն:

Մանկավարժական գնահատման ճանապարհի հնարավոր դժվարությունների, խոչընդոտների ու վտանգների պատճառ կարող են լինել ոչ միայն արտաքին գործոնները (երեխաների մեծ թիվը, ժամանակի սղությունը), այլև դաստիարակի տարիքը, փորձը, հուզակամային որակները, անհատականությունը, հոգեբանական մթնոլորտը, անտարբերությունը, համակրանքը (հիացմունքը) կամ հակակրանքը որևէ երեխայի նկատմամբ, իր աշխատանքի նկատմամբ սիրո բացակայությունը և այլն: Այս ամենը խոսում են այն մասին, թե ինչպիսին կարող է լինել մանկավարժական գնահատականը:

Ուսուցման նորացված մեթոդների կիրառումը մանկապարտեզում

ա/ Պարապմունք և խաղ, պարապմունքների կառուցվածքային տարբեր մասերում խաղային շարժառիթների օգտագործումը,

բ/ Երեխաների ուսուցման եղանակները

Ուսուցման հակադիր ձևեր են համարվում պարապմունքները և խաղերը:

Պարապմունքները ուսուցման կազմակերպված ձևեր են

Պարապմունքների կազմակերպմանը ներկայացվող մանկավարժական պահանջներն են.

- նպատակաուղղվածություն և դրան համապատասխան պայմաններ,
- մանկավարժի բարյացկամ և դրական հուզական վերաբերմունք,
- մանկավարժական հմուտ և ճկուն ուղղորդում,
- խաղային հնարների, շարժառիթների և ֆիզդադարների օգտագործում:

Պարապմունքների կազմակերպման ձևերն են՝ անհատական, ենթախմբերով և համընդհանուր, որոնք կարող են վարվել կախված պարապմունքների բնույթից.

Պարապմունքների օրինակելի ցանկերը (ըստ խմբերի) կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ պահանջները՝

- պարապմունքների անցկացման վայրը,
- տևողությունը,
- կառուցվածքային մասերը (ԽԻԿ համակարգ),
- տեսակները (ուսուցում, ամրապնդում, խորացում, կրկնողություն և խառը տիպեր)

Պարապմունքների մանկավարժական վերլուծման մոդելները (քարտեր, գծապատկերներ), ըստ որոնց դիտարկվում, վերլուծվում և գնահատվում է երեխաների զարգացման ընթացքը և դաստիարակի մանկավարժական վարպետությունը: Պարապմունքի հակադիր ձևը խաղն է և խաղային դրդապատճառների օգտագործումը պարապմունքների կառուցվածքային տարբեր մասերում: Այս տեսակներից խաղի և պարապմունքի ինքնատիպ միավորում են դառնում դիդակտիկ խաղերը՝

- խաղի միջոցով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները
- խաղը նպաստում է գործունեության այլ ձևերի (աշխատանքային, ուսումնական) առանձնացմանը,
- խաղում ազատ, ինքնուրույն գործում են, ինքնարտահայտվում
- խաղը՝ որպես ստեղծագործական գործունեություն, նպաստում է երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը
- խաղը նպաստում է աշխարհաճանաչմանը, որպես իմացական գործունեություն
- խաղի ընթացքում զարգանում են բարոյակամային որակները և հուզազգացմունքային ոլորտը:
- *Խաղը երեխայի զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, նրա կենսագործունեության կազմակերպման կարևոր ձևը:*

Խաղային բնույթով պարապմունքների և խաղերի կազմակերպումը, համակեցության կանոններով աշխատանքը տանում են երեխային դեպի դպրոց, ակտիվ ուսումնառություն: դիդակտիկ, զարգացնող, շարժուն, սյուժետադերային, կառուցողական, ռեժիսորական, թատերականացված, խաղ-հետազոտությունները կարգավորում են հաշվեկշիռը բոլոր խաղերի միջև, օգնում հաճույքով ստանալու տեղեկատվություն և կառուցելու գիտելիք:

Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը օգնում է երեխային հենց պարապմունքի սկզբից «պասիվ լսողից» անցնելու «ներգրավված մասնակցի» կարգավիճակի: Ուսուցման ակտիվ մեթոդ են ջերմացնող մտքերը, մտավարժանքները և այլն: Մտքերի տարափի (ուղեղի գրոհ) ժամանակ երեխաներին տրվում է մտքերի անհրաժեշտ փոխանակության և համագործակցության հնարավորություն: Կարելի է նաև կիրառել «Հետադաձ մտքերի» մեթոդը: Այս դեպքում երեխաներին ծանոթացվում է պրոբլեմի հետ, նկարագրվում իրադրությունը, այն լուծելուց հետո հարցերով և պատասխաններով պարզում, թե ինչ հանգամանքներ բերեցին այդ պրոբլեմի փոփոխություններին:

Նման մեթոդների կիրառումը հարմար է նաև աշխատակիցների հետ թրենինգների, սեմինարների վարելու ընթացքում:

Հակիրճ ներկայացնենք, թե ըստ մտածողության տեսակի ինչ են անում երեխաները և գործնական աշխատանքում դա նկատի ունենալ:

- Խոսքային-լեզվական մտածողությամբ երեխաները ուժեղ են բառերով մտածելու, պատմություններ պատմելու մեջ, սիրում են պատմել, խոսել և մտապահել, ամենից լավ սովորում են լսելու, խոսելու, մտքեր փոխանակելու միջոցով:
- Տրամաբանամաթեմատիկական մտածողությամբ երեխաները ուժեղ են կռահելու, բացահայտելու մեջ, սիրում են հարցեր տալ, փորձեր կատարել, սովորում են դասակարգելու, համեմատելու միջոցով:
- Տարածական մտածողությամբ երեխաները ուժեղ են նկարելու, երևակայելու, մտավոր պատկերներ ստեղծելու մեջ, նրանք սիրում են ձևավորել, ստեղծագործել, նկարել, երազել և նկարներ նայել, սովորում են պատկերների և գույների հետ աշխատելու, պատկերացնելու և նկարելու միջոցով:
- Մարմնաշարժողական մտածողությամբ երեխաները ուժեղ են մարմնամարզության, պարի արհեստների մեջ,սիրում են շարժման մեջ գտնվել, ամենից լավ սովորում են շարժվելու և գիտելիքը մարմնական զգացողություններով անցկացնելու միջոցով:

- Երաժշտական մտածողությամբ երեխաները ուժեղ են ձայնակցելու, մեղեդիներն ու ռիթմը մտապահելու մեջ: նրանք սիրում են երգել, նվագել և երաժշտություն լսել: Ամենից լավ նրանք սովորում են ռիթմի, մեղեդու և երաժշտություն լսելու միջոցով:
- Միջանձնային մտածողությամբ երեխաները ուժեղ են մարդկանց հասկանալու, կազմակերպելու, հաղորդակցվելու, հակասությունները հարթելու և համոզելու մեջ: Նրանք սիրում են ընկերներ ունենալ, շփվել մարդկանց հետ: Ամենից լավ նրանք սովորում են մտքեր փոխանակելու, հարցուփորձ անելու և համագործակցելու միջոցով:
- Ներանձնային մտածողությամբ երեխաները ուժեղ են իրենց հասկանալու, անձնական ուժեղ և թույլ կողմեր ճանաչելու, անձնական նպատակները նախանշելու մեջ: Նրանք սիրում են աշխատել միայնակ, մտորել, զբաղվել իրեն հետաքրքրող գործով: Ամենից լավ նրանք սովորում են միայնակ աշխատելու, անհատական աշխատանքներ կատարելու միջոցով:
- Բնագիտական մտածողությամբ երեխաները ուժեղ են բնությունը հասկանալու, ճանաչելու մեջ: Նրանք սիրում են լինել բնության մեջ: Ամենից լավ նրանք սովորում են հետազոտել բնությունը, բնական երևույթները, կենդանիներին, բույսերին:

Պարապմունքներ և գործունեության ձևեր

Պարապմունքները եղել և հիմնականում այսօր էլ որոշ հաստատություններում մնում են որպես ուսուցման գերիշխող ձև՝ մոռանալով երեխաների կարիքների և հետաքրքրությունների մասին, թե ինչպես կուզենա նա գիտելիք ձեռք բերել: Պարապմունքների ձևով իրականցվող ուսուցման ընթացքում երեխաները տիրապետում են որոշակի գիտելիքների և կարողությունների, որոնք չեն կարող յուրացվել խաղերի, մեծերի հետ հաղորդակցման և ինքուրույն գործունեության ընթացքում: Ուսուցումը պետք է կատարել ամենից շատ խաղային բնույթով և խաղի մեջ:

Պարապմունքներում և գործունեության այլ ձևերում երեխաների նվազագույն և առավելագույն ծանրաբեռնվածությանը ներկայացվող պահանջները՝ երեխաների կանոնավոր ծանրաբեռնվածությունը խաթարվում է, եթե կրթության բովանդակությունը, ուսուցման ձևերը, մանկապարտեզի ռեժիմը չեն բխում երեխաների տարիքային առանձնահատկություններից և հնարավորություններից:

Մտահոգիչ է երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններին անհամապատասխան օրվա պարապմունքների թիվը և տևողությունը: Մանկապարտեզներում լրացուցիչ (օտար լեզու, պար, կերպարվեստ, ֆիզկուլտուրա և այլն) կազմակերպվող պարապմունքները նույնպես ծանրաբեռնում են երեխային, թուլացնում աշխատունակությունը, որի վերականգնմանը չեն օգնի ցերեկային քունն ու հանգիստը: Հոգնածությունից բացի, դա լուրջ հետևանքներ կունենա երեխաների առողջության վրա:

Ուսումնական ծանրաբեռնվածության հիգիենիկ պահանջներով առաջնորդվելու համար խորհուրդ է տրվում՝

- Չխախտել նախադպրոցական կրթության օրենքով սահմանված խմբերում երեխաների ընդգրկվածության թիվը
- Կատարել ռեժիմի (կանոնակարգի) պարապմունքների թվի, տևողության, հերթագրման, ընդմիջումների,զբոսանքների, խաղերի, ինքնուրույն գործունեության, համակարգչային

գրագիտության տիրապետման, կերակրման, ընդհանուր շարժողական ռեժիմի, ծնողների հետ աշխատանքի ծրագրային պահանջները:

Ուսուցման մեթոդները

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ: Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ուղի: Այն գործիք է դաստիարակի համար իր կրթադաստիարակչական նպատակներին հասնելու ճանապարհին:

Ներկայում նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ խաղային, գործնական, ակտիվ ուսուցման մեթոդները: Վերջիններս հայտնի են որպես *ինտերակտիվ կամ փոխգործուն* մեթոդներ:

Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները, որոնք կատարում են երկու կարևոր գործառույթ.

– նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,

– խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:

Խաղի յուրաքանչյուր տեսակ երեխայի զարգացմանը նպաստող ուրույն մեթոդ է: Հետաքրքիր խաղային մեթոդ է երևակայական իրադրությունների խաղարկումը, որի ընթացքում երեխան գիտելիքներ և կարողություններ է ձեռք բերում դերային գործողությունների միջոցով: Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները և մոդելավորումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբային մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են անհատա-կողմնորոշիչ/երեխայակենտրոն/ ուսուցման սկզբունքներին և կարող են արդյունավետորեն ծառայել նշված ուսուցման մոդելի խնդիրների լուծմանը:

Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեկի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են.

– փոխազդեցությունը, փոխուսուցումը

– երեխայի ակտիվությունը

– համագործակցությունը

– ինքնարտահայտման խրախուսումը

– հետադարձ կապը:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

– երեխայի իմացական գործընթացների կազմակերպում

– հետաքրքրությունների բացահայտում

– համագործակցային կարողությունների զարգացում

– անհատական առանձնահատկությունների բացահայտում

– հաղորդակցական ունակությունների ձևավորում

– տրամաբանական մտածողության զարգացում

– ինքնուրույնության խրախուսում

– վերլուծական կարողությունների ձևավորում:

Այդուհանդերձ, չկան փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի է և անկրկնելի: Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին:

Պարապմունքի պլան

Ինտեգրված Ավագ խումբ

Շրջապատի հետ ծանթացում և ապլիկացիա

Թեմա՝ բույսի աճման համար անհրաժեշտ պայմանները ըստ <<Ճանապարհորդ կորիզը>> գրքի։

Տևողությունը 2 պարապմունք։

Նպատակը՝

- Սովորեցնել, թե ինչպես է սերմը բույս դառնում։
- Սովորեցնել բույլի աճման համար անհրաժեշտ պայմանների և փուլերի մասին։

Նյութեր՝

- Մեծադիր գիրք <<Ճանապարհորդ կորիզը>>, բույսի աճման փոլերի նկարներ։
- Թուղթ, սասինձ, բույսերի նկարներ, բնությոն երևույթների նկարներ։

Մեթոդներ՝

Համատեղ ընթերցանություն, աշխատանք փոքր խմբերով, անհատական։

Ը Ն Թ Ա Ց Ք Ը

Խթանման փուլ Ըստ Համատեղ ընթերցանության մեթոդի ցուցադրել նկարները։

Հարց. Ինչի մասին է գիրքը։ Գրել պատասխանները, գրանցելոով երեխաների անունները։

Իմաստի ընկալման փուլ Ընթերցել գիրքը ըստ Համատեղ ընթերցանության մեթոդի։ Վերադառնալ գրառումների։ Հարց. Ինչի մասին է գիրքը։

Վերլուծական հարցեր. Ինչ կլիներ եթե կորիզը չընկներ ջրի մեջ։ Քննարկել փոքր խմբերով, որից հետո հարցնել մի քանի երեխայի։

Հարց. Դու երբևիցե ինչ-որ բան ցանել ես։ Ինչ է աճել։ Ինչ անենք, որ բույսը լավ աճի։

Ամփոփել պտասխանները։

Փոքր խմբերի բաժանել երեխաներին։ Յուրաքնչյուրին տալ բույսի աճման փոլերի նկարներից մեկական, հեթականությամբ դասավորելու համար։ Աշխատում են միասին, համագործակ-ցելով, ստանում են մեկ ընդհանուր պատկեր։

Դիտարկել և ամփոփել աշխատանքները։

Ֆիզկուլտ դադար։

Կշռադատման փուլ Կանգնել շրջանով, ավարտել նախադասությունը։ Որպեսզի սերմը բույս դառնա, պետք է ... ջրել, պրարտացնել, փխրեցնել հողը։

Ապլիկացիա Թղթերին փակցնել բույսերի նկարներ, երեխաներին տրամադրել բնության երևույթների նկարները՝ ուրվագծով կտրելու և բույսի պատկերի շուրջը սոսնձելու համար։

ԴԻՏԱՐԿՈՒՄ ՄԵԹՈԴԻՍՏԻ ԿՈՂՄԻՑ

Իմ կարծիքով դաստիարակը հասել է իր առջև դրված խնդրին։ Այս պարապմունքի միջոցով զարգանում է երեխաների ուշադրությունը, հիշողությունը, ինքնասպասարկման կարողությունները։ Երեխաները ստացան անհրաժեշտ նախնական գիտելիքներ բույսերի աճման և բազմացման համար։ Ընդլայնվեցին տարվա եղանակների, բնության օրացույցի, եղանակների հերթագաությամբ պայմանավորված բնության սեզոնային փոփոխությունների մասին երեխաների պատկերացումները։ Դաստիարակը օգտագործել է ԳՈՒՍ մոդելը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով չափորոշիչը կանոնակարգող փաստաթուղթ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները։

Չափորոշիչին համապատասխան մշակվում են կրթական ծրագրեր, կանոնակարգող ակտերի նախագծեր, ուղեցույցներ, երաշխավորություններ, հաղորդաշարեր։ Չափորոշչի հիման վրա կատարվում են դիտարկումներ և այլն։ Այսինքն՝ չափորոշիչը համարվում է հայեցակարգերի, ծրագրերի (այդ թվում նաև վերապատրաստման տարբերակված ծրագրերի), մեթոդական ուղեցույցների մշակման, դրանց գործնականում ներդրման և ինչպես վերը նշվեց, երեխայակենտրոն կրթության իրականացման հիմք։

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքներն են՝ երեխաների զարգացման և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, խաղի գերակայությունը և խաղային գործունեության, կրթական աշխատանքների անհատականացումը և պլանավորումը, մտքի և խոսքի ազատ դրսևորումը, ծնողների ներգրավումը մանկապարտեզի առօրյայում, երեխաների սահուն տարրական դպրոցի անցման կազմակերպումն ու իրականացումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը, մասնավոր մեթոդիկաների տիրապետումը, զարգացնող առարկայական և ֆիզիկական միջավայրի ապահովումը։

Չափորոշիչի որակական պահանջները սահմանվում են ըստ տարիքի և զարգացման ոլորտների այնպես, որ հասանելի լինի անապահով ընտանիքներին։

Չափորոիչի հիման վրա աշխատանքը ակնկալում է միասնական հենքային դաշտի ստեղծում, կրթական ոլորտի զարգացում և նորացում, կադրերի մասնագիտական կատարելագործում, հիմնական արժեքային հարաբերությունների ձևավորում և այլն։

Չափորոշիչով սահմանված կրթության բովանդակության հասանելիությունն ապահովվում է զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան հետևյալ բաղադրիչներով՝ գիտելիք, կարողություն, հմտություն, արժեքային համակարգ:

Նախադպրոցական կրթության պետական կրթական, զարգացման և միջավայրային չափորոշիչները կազմում են վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամասեր և սահմանում նախադպրոցական երեխաների կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները: Չափորոշչում նախադպրոցական կրթության բովանդակությունը ներկայացվում է պայմանականորեն տարանջատված կրթադաստիարչական ոլորտ-տիրույթների և բաղադրիչների միջոցով:

Չափորոշիչը նաև կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդունված մակարդակն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ, 2021թ
2. Միտոյան Հ. – Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, 2020թ
3. http://edu.nk.am/2021/08/23/%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A5%D5%BE-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%85%D5%A3%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82/htt
4. https://escs.am